

6. ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԿԵՆՍԱՊԱՇՏՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

6.1. Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն քանակ սահմանել մինչև 170 մլն մ³: **«սահմանափակելով օրենքով նախատեսված չափաքանակից ավել ջրառի իրականացումը Սևանա լճի բացասական հաշվեկշռի պարագայում»**

Տնտեսական խիստ անհրաժեշտության, ինչպես նաև չնախատեսված արտակարգ իրավիճակների դեպքում կառավարությունը «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կարող է Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնել չափաքանակի փոփոխության մասին ժամանակավոր ծրագիր, որը հաստատվում է համապատասխան օրենքի ընդունմամբ:

6.2. Սևանա լճի ջրհավաք ավազանի կենսապաշարների, այդ թվում՝ ձկան պաշարների չափաքանակները սահմանվում են՝ ելնելով դրանց հաշվառման, ուսումնասիրման արդյունքներից և գիտահետազոտական կազմակերպությունների կողմից տրված հիմնավորումներից ու առաջարկություններից՝ քվոտավորման սկզբունքով:

6.3. 2008 թվականին Սևանա լճից ջրի բացթողման տարեկան առավելագույն չափաքանակ սահմանել մինչև 360 մլն մ³:

(6.3-րդ կետը լրաց. 10.06.08 ՀՕ-115-Ն, փոփ. 21.08.08 ՀՕ-136-Ն)

6.4. 2012 թվականին Սևանա լճից ջրի բացթողման տարեկան առավելագույն չափաքանակ սահմանել մինչև 320 մլն մ³:

(6.4-րդ կետը լրաց. 22.06.12 ՀՕ-171-Ն)

6.5) 2014 թվականին Սևջուր գետի և Արարատյան դաշտի ստորգետնյա ավազանի սակավաջրությամբ, ինչպես նաև ընթացիկ տարվա առանձնահատկություններով պայմանավորված՝ Սևանա լճից ջրի բաց թողման տարեկան առավելագույն չափաքանակ սահմանել մինչև 270 մլն մ³:

(6.5-րդ կետը լրաց. 21.06.14 ՀՕ-81-Ն)

6.6. 2017 թվականին Սևանա լճից ջրի բաց թողման տարեկան առավելագույն չափաքանակ սահմանել մինչև 270 մլն մ³: 2017 թվականի ընթացքում Սևանա լճից բաց թողնվող ջրի 170 մլն մ³-ը գերազանցող չափաքանակի հաշվին արտադրվող էլեկտրական էներգիայի վաճառքից «Միջազգային էներգետիկ կորպորացիա» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունների հասույթի և կատարած ծախսերի տարբերությունից առաջացող շահույթը (այսուհետ՝ Լրացուցիչ շահույթ) ենթակա է վճարման այդ գումարների հավաքման և դրանց հաշվին ժամանակավոր ծրագրի 3-րդ մասով սահմանված ուղղություններով նպատակային ներդրումների իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1.2-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետին համապատասխան բացված արտաբյուջետային հաշվին (այսուհետ՝ Արտաբյուջետային հաշիվ): Լրացուցիչ շահույթի հաշվարկման ու վճարման կարգը, ինչպես նաև հաշվին կատարվելիք բյուջետային ելքերի նախահաշիվը (նախահաշիվները) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Արտաբյուջետային հաշվի միջոցների շրջանառությունը և պետական բյուջեի կատարման հաշվետվություններում արտացոլումն իրականացվում են օրենսդրությամբ սահմանված կարգով: Տարեկան արդյունքներով Արտաբյուջետային հաշվի միջոցների չծախսված մնացորդն ուղղվում է այդ հաշվից հաջորդ տարում կատարվելիք բյուջետային ելքերի նախահաշվով (նախահաշիվներով) նախատեսվող բյուջետային ելքերի ֆինանսավորմանը:

(6.6-րդ կետը լրաց. 06.07.17 ՀՕ-116-Ն)

6.7) 2018 թվականին Սևանա լճից ջրի բացթողման տարեկան առավելագույն չափաքանակ սահմանել մինչև 210 մլն մ³: 2018 թվականի ընթացքում Սևանա լճից բաց թողնվող ջրի 170 մլն մ³-ը գերազանցող չափաքանակի հաշվին արտադրվող էլեկտրական էներգիայի վաճառքից «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունում առաջացող լրացուցիչ գումարները (այսուհետ՝ Լրացուցիչ գումարներ) ենթակա են վճարման այդ գումարների հավաքման և դրանց հաշվին ժամանակավոր ծրագրի 3-րդ մասով սահմանված ուղղություններով նպատակային ներդրումների իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1.2-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետին համապատասխան բացված արտաբյուջետային հաշվին (այսուհետ՝ Արտաբյուջետային հաշիվ):

Լրացուցիչ գումարների հաշվարկման ու վճարման [կարգը](#), ինչպես նաև դրանց հաշվին կատարվելիք բյուջետային ելքերի նախահաշիվը (նախահաշիվները) սահմանում է Կառավարությունը: Արտաբյուջետային հաշվի միջոցների շրջանառությունը և պետական բյուջեի կատարման հաշվետվություններում արտացոլումն իրականացվում են օրենսդրությամբ սահմանված կարգով: Տարեկան արդյունքներով Արտաբյուջետային հաշվի միջոցների չծախսված մնացորդն ուղղվում է այդ հաշվից հաջորդ տարում կատարվելիք բյուջետային ելքերի նախահաշիվ (նախահաշիվներով) նախատեսվող բյուջետային ելքերի ֆինանսավորմանը:

(6.7-րդ կետը լրաց. 29.08.18 ՀՕ-373-Ն)